

**Տ. ՏԱՐՈՆ ԵՊԻՄԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**

(25 սեպտեմբերի 2005 թ.)

*«Զի ահաւոր եւ անպարտւմ պաշտօնին
կարարեցաք եւ հրաւիրուեցաք»:*

(Մաշտոց ձեռնադրության)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Սուրբ Պատարագի ծածուկ աղոթքների մեջ կարդում ենք մեր աղոթող վարդապետի այս մարածումը և զգացումը հանդիսացող աղոթքը, որուն մեջ Զրիպտոսի մարմնի և արյան փոխարկվող հաց ու գինիի դիմաց, վերացած, հավաքում է, թե ինքը ահավոր և անպարտւմ մի պաշտոնի է կոչված: Ահավորը՝ ինչպես ընդունիլ մարդկային մեր չափանիշների համեմատ Աստուծո ռոջակիզումը, մասերու բաժնվիլը և մահը, իսկ անպարտւմը՝ այդ պաշտոնին սահման չի դնում բոլոր անոնց, որոնք քաջությամբ են մոտենում՝ սրանալու շնորհը, դառնալու համար պաշտոնյան Աստուծո:

Եվ ահավասիկ այսօր յոթ նվիրյալներ, ավարտելով իրենց մրքի և հոգիի պարբասության շրջանը, քաջությամբ և վստահությամբ կոչվում են ահավոր և անպարտւմ այդ խորհուրդին որպես սպասավորներ: Ձեռնադրությամբ և Սրբալույս Մյուռնոնով օծմամբ, այսօր նրանք արդեն իսկ դարձել են հոգևոր պաշտոնյաներ: Ինչ ահավոր և անպարտւմ է այս արարողությունը, որուն մեջ են հինը ներվում է, նորն է փեղը գրավում, անցյալը մոռացվում է, անոր փեղ նոր իր պաշտոնի անհրաժեշտությունը նրա սրբության հետ միասին իր փեղն է գրվում:

Իմ խոսքը ուղղելով նորընծա քահանաներիդ ձեր պաշտոնի սկզբից, երբ այսուհետ կանցնին քառասուն օրեր խոկումի և պարբասության օրերից հետո, առաջին իսկ օրը, երբ կսկսիք քահանայական Ձեր գործունեությունը, ձգտեցեք ձեր կապը անխախտ պահել ամեն մեկ հայի հետ, հայու հավաքավոր զավակի հետ, որ ձեր ծուխի կամ համայնքի մեջ կա, քանդակագործի նման հավաքական աղոթքներից վերջ, հավաքական քարոզներից կամ հավաքություններից հետո ամեն մեկ հայու հետ կարողացեք պահել ձեր հարաբերությունը՝ դրոշմելու համար անոր մրքին և սրբին մեջ քրիստոնեական մեր Սուրբ Եկեղեցու վարդապետությունը, հայ ժողովրդի դարավոր արժեքները, գիր ու լեզու և որպես հայ ապրելու կոչումը, այն ժամանակ, երբ դուք ձեր աշխարհային ոգին անպարտւմ սահման պիտի դնեք և ոչ թե սահմանափակյալ օր կամ ժամանակ կամ երևույթ:

Վերը բերված աղոթքին մեջ ես այս եմ զգում, որ ամբողջությամբ դու անելուք է փաս քո ժողովրդին, և այսպեղ է, որ փարբերվում է հոգևորականի պարբականությունը և պաշտոնը աշխարհում եղած մյուս բոլոր պաշտոններից: Տարբեր զբաղումների փեր աշխարհողնե-

ըը ունեն օրվա ժամանակներ: Այդ ժամանակների մեջ աշխատում են, նայում են իրենց ժամացույցը և մեկնում են փուն: Արդար է, դեմ չեմ դրան, բայց հայ հոգևորականն ի մասնավոր ի ժամացույց ունենալու, նայելու պարտավորություն չունի, որովհետև իր կյանքը նվիրում է, և հայ հոգևորականին նվիրումը փարբեր չափանիշ ունի, փարբեր մեծություն ունի, ուրիշ է. Եվրոպայում, նրանք այլ չափերու մեջ են դրել, բայց մեր եկեղեցականը իր ժողովուրդին նվիրյալ, ամբողջական և լիարժեք ներկայանալու է:

Ահավասիկ այս մի բանի մարբերից հետո, Ավետարանի հետևյալ խոսքով ուզում եմ ավարտել, թե ճշմարիտ ծառան արժանի է իր վարձքին: Հայ ժողովուրդը հավատարմոր է: Ինքզինքը ամենաանհավար կոչողը նույնիսկ հավատարմոր է, կապված է իր Եկեղեցուն, իր ազգին: Եթե այդպես չլինի, նա իր ինքնությունը կկորցնե: Ահա թե ինչու հոգևորականին կմնա անոնցմե յուրաքանչյուրի դիմաց ցույց չբալ ծուլություն, ցույց չբալ հոգևաբեկ, նույնիսկ եթե ֆիզիկապես հիվանդ ես: Դիմացիներն պետք է մոտենաս միշտ այն համոզումով և այն ոգեկանությամբ, որ այս պահուն ընդունեցիք ձեռնադրություն և օծում Վեհափառ Հայրապետի որոշումին համաձայն, ավարտելով ձեր ուսման շրջանը:

Ձեր ուսման շրջանը սակայն այսօր առավել ևս նոր է սկսվում, որովհետև մինչև այսօր ամբարեցիք, այսուհետև կբաշխեք, ուրիշներին պիտի հասնեք փալու: Բոլորովին անչափելի, անհամեմատելի իրականություններ չեն սրանք, այլ մեկը մյուսին հետ կապված օղակավոր ճշմարտություններ՝ ի երջանկություն և ուրախություն յուրաքանչյուրին համար: Դուք ալ պետք է ըլլաք երջանիկ, բայց մեր երջանկությունը հոգևոր է և մեր հաղթանակին արդյունքն է, մեկ հոգիի հավաքքին բերելու արդյունքն է: Եվ եթե ուրիշներ ուրիշ բաների մեջ են փնտրում իրենց հաղթանակը և ուրախությունը, դուք պիտի փնտրեք ձեզի ընկած բաժնին մեջ, ժողովուրդը հավատարմոր բերելու դեպի մեր սուրբ հավաքքի և մեր հայկականության ամբողջության մեջ:

Թող Աստված օրհնի ձեզ, ինչպես ձեռնադրությամբ և օծմամբ շնորհը ստացաք, առավել ևս Սուրբ Հոգու շնորհը թող հեղվի ձեր վրա, որպեսզի ըլլաք այն, ինչ որ ես հավատում եմ, ինչ որ սիրելի մեր Վեհափառ Հայրապետը հավատում է, որ դուք պիտի լինեք պաշտոնյաները անչափելի և անպարտում այս աստիճանի ճամփով փրկված պաշտոնին, որին այսօր արժանավորապես կոչվեցաք:

Թող Աստված օրհնե ձեզ, և ձեր օրհնությունը վերադառնա մեր ժողովուրդին՝ հուրախություն և ի բժշկություն հիվանդաց և մեր Սուրբ Եկեղեցվո անասասնության:

Շնորհակալություն, Վեհափառ Տեր, որ այս ընծայալներուն ձեռնադրելու մեծ շնորհքը ինձի փվիք. ամեն: